ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Անուշավան Ավետիսյանը, Խաչիկ Գրիգորյանը, Արթուր Կարապետյանը, Անի Ղազարյանը, Գնել Ղազարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյանը

Նիստը արձանագրում էր ՝ Գևորգ Սիմոնյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի ավագանու 21.08.2025 թվականի « Արենի համայնքի ղեկավարի օգնական Ռոման Բաղդասարյանի գրությունը քննարկելու և իր սեփական ՎԱՋ 212140 մակնիշի ավտոմեքենայի համար 4 հատ՝նոր անվադող տրամադրելու մասին» թիվ 114-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝
1) Որոշման հղման մեջ «Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի» բառերից հետո լրացնել «18-րդ հոդվածի» թվերը և բառերը:
2) որոշման մեջ «անվադող» բառից հետո լրացնել «համայնքի խնդիրների լուծման նպատակով անձնական ավտոմեքենան օգտագործելու պայմանով» բառերով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 128-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՃՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕՐԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,087ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի» 29/08/2025թ.-ի N 2/փ-279 դրական եզրակացությունը Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.087 հա (ծածկագիրը՝ 10-004-0022-0015, 0,07667 հա-ի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ հողատեսք, 0,01033հա-ի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ ինքնակամ կառուցված բնակելի տունը և օժանդակ կառույցները օրինականացնելու նպատակով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 129-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին մասի 3-րդ և 14-րդ կետերը՝ Արենի համայնքի ավագանին

որոշում է.

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.36454 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0178-0016, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ հանգստի ժամանակավոր բնակության և հանրային սննդի համար նախատեսված գոտու ավտոկայանատեղի կառուցելու նպատակով:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.25152 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0178-0017, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության՝ հարևանությամբ գոտնվող հողատարածքները ճանապարհով ապահովելու նպատակով:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.36202 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0179-0039, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել ջրային հողերի կատեգորիա՝ ջրային գործառնական նշանակության:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ալիկ Վազգենի Վարդանյանի սեփականություն հանդիսացող 0.42175 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0179-0017, հողատեսքը՝ այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ հանգստի ժամանակավոր բնակության և հանրային սննդի համար նախատեսված գոտի կառուցելու նպատակով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 130-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 92-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի ղեկավարի բյուջեի կատարման 2025 թվականի երրորդ եռամսյակի հաշվետվությունը ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 133-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.11.2022ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 145-Ա, 146-Ա ԵՎ 09.09.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 116-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենի համայնքի ավագանու 30.11.2022թվականի թիվ 145-Ա և թիվ 146-Ա որոշումների մեջ կատարել փոփոխություններ՝ որոշումների տեքստի մեջ <<Արեմնուհի Ծատուրյան>> և <<Նարինե Սմբատյան>> բառերը փոխարինել <<Անի Ղազարյան>> և <<Սուսաննա Բաբայան>> բառերով:

2. Արենի համայնքի ավագանու 09-ը սեպտեմբերի 2025 թվականի « Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին» թիվ 116-Ա որոշման հղման մեջ «8-րդ և 14-րդ կետերը» թվանշանները և բառերը փոխարինել « 4-րդ կետի» թվանշանով և բառերով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 132-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 08-ը Հոկտեմբերի 2025 թվականի թիվ 13 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 08.10.2025թվականի թիվ 13 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի ավագանու 21 օգոստոսի 2025 թվականի թիվ 114-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

3. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող , համայնքային սեփականություն հանդիսացող, 0,087հա գյուղատնտեսական և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

4. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացիների և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

5. Արենի համայնքի ավագանու 15.01.2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

6. Արենի համայնքի ավագանու 30.11.2022 թվականի թիվ 145-Ա, 146-Ա և 09 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 116-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

7. Արենի համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:

8 . Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում հաղթած «Ռինդ բնակավայրի հանդամիջյան 1700 գծամետր ընդհանուր երկարությամբ ճանապարհների բարեկարգում» ծրագրի 2-րդ փուլը 3600 գծամետր ընդհանուր երկարությամբ ճանապարհների բարեկարգումը սուբվենցիոն ծրագրով իրականացնելու մասին:

9. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ հատկացնելու մասին:

10. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելուն համաձայնություն տալու մասին:

11. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,16130հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և հողամասում առկա օրինականացված 84,84քմ շինությունները, կառուցապատող Ստեփան Արսենի Սարգսյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին:

12. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 127-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.01.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 15-ը հունվարի 2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումնե ը՝

1. Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4222 /արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր/ հոդվածից պակասեցնել 800 000 ՀՀ դրամ և ուղղել՝

1) կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4215 /ապահովագրական ծախսեր/ հոդվածին 225 000 ՀՀ դրամ, 4235/կառավարչական ծառայություններ/ հոդվածին ՝ 375 000 ՀՀ դրամ,

2) ընդհանուր բնույթի այլ ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի 4819 /նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածին 200 000 ՀՀ դրամ:

2. Արտադպրոցական դաստիարակություն գործառնական դասակարգման 09 բաժնի 05 խմբի 01 դասի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 1 500 000 ՀՀ դրամ, 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածից ՝1 500 000 ՀՀ դրամ, 4512 /սուբսիդիաներ ֆինանսական պետական կազմակերպություններին/ հոդվածից ՝ 3 300 000 ՀՀ դրամ:
Պակասեցված ընդհանուր 6 300 000 ՀՀ դրամն ուղղել ընդհանուր բնույթի այլ ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի 4819 /նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածին:

3. Արենիի այլ մշակութային միջոցառումներ գործառնական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4727 /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/

պակասեցնել 1 470 000 ՀՀ դրամ, 4236 /կենցաղային և հանրային սննդի ծառայություններ/ հոդվածից՝ 1 000 000 ՀՀ դրամ,4239/ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածից՝ 4 000 000 ՀՀ դրամ: Պակասեցված ընդհանուր 6 470 000 ՀՀ դրամն ուղղել ընդհանուր բնույթի այլ ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի 4819/ նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածին:

4. Արենի այլ ոչ հարկային եկամուտներ 28 բաժնի 50 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 7 874 149 ՀՀ դրամ, նշված գումարն ուղղել՝

1) գյուղատնտեսություն 04 բաժնի 02 խմբի 01 դասի 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին 7 664 805 ՀՀ դրամ,

2) կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ հոդվածին 229 334 ՀՀ դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 131-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2.5718 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-006-0313-0124, հողատեսքը՝ արոտավայր) մրցույթով, 15 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.26258 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-037-0124-0014, հողատեսքը՝ արոտավայր) մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել

վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 12 000 (տասներկու հազար) ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.19617 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-037-0124-0013, հողատեսքը՝ արոտավայր) մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 135-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն սույն որոշման հավելված 1-ով ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը լիցենզավորված կազմակերպության կողմից գնահատելու և աճուրդ-վաճառքով օտարելուն:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 136-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,16130ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ և ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ 84,84ՔՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ՍՏԵՓԱՆ ԱՐՍԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,16130հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0017, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) և օրինականացված 84,84քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շինությունները (Տեխնիկական սենյակ՝ 7,26քմ., ավտոլվացման կետ՝ ծածկ՝ 76,78քմ., սանհանգույց՝ 0,8քմ) ուղղակի վաճառքով օտարել կառուցապատող Ստեփան Արսենի Սարգսյանին:

1) Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

ա) 0.16130ա բնակավայրերի նշանակության հողամասի համար՝ 5 494 061 ՀՀ դրամ,

բ) 84,84քմ ընդհանուր մակերեսով օրինականացված շինությունների համար՝ 923 144 ՀՀ դրամ,

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 137-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԱԾ «ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՆԴԱՄԻՋՅԱՆ 1700 ԳԾԱՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ 2-ՐԴ ՓՈՒԼԸ 3600 ԳԾԱՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 25-րդ կետերի և ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման պահանջերով, և հաշվի առնելով, որ մասնակցային բյուջետավորում գործընթացի շրջանակներում հաղթած «Ռինդ բնակավայրի հանդամիջյան 1700 գծամետր ընդհանուր երկարությամբ ճանապարհների

բարեկարգում» ծրագրի իրականացումից հետո խիստ անհրաժեշտություն է առաջացել ծրագրի 2-րդ փուլի իրականացումը.

Արենի համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Մասնակցային բյուջետավորում գործընթացի շրջանակներում հաղթած «Ռինդ բնակավայրի հանդամիջյան 1700 գծամետր ընդհանուր երկարությամբ ճանապարհների բարեկարգում» ծրագրի 2-րդ փուլը՝ 3600 գծամետր ընդհանուր երկարությամբ ճանապարհի բարեկարգումը, նախագծանախահաշվային արժեքը 40284750 ՀՀ դրամ, 2026 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնելուն:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 134-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ավագանին *որոշում է՝*

Արենի համայնքի ավագանու 2025 թվականի աշնանային նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025 թվականի նոյեմբերի 25-ին ժամը 16:00-ին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 138-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՄՀԵՐ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԻՇԱ ՂԱՋԱՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ _____